Գ.Ս.Խաչատրյանի և Մ.Ի.Աղաջանովի «Կենսաքիմիա» դասագրքի գրախոսություն

Կենսաբանական քիմիայի, մոլեկուլային կենսաբանության և կենսատեխնոլոգիայի ապշեցուցիչ նվաճումները և ժողովրդական տնտեսության զարգացման տարբեր բնագավառներում դրանց օգտագործման հնարավորությունները նոր հեռանկարներ են բացում գիտության այդ ուղղությունների զարգացման համար: Դրա հետ կապված գիտական ինֆորմացիայի ծավալը գնալով ավելանում է: Անհետաձգելի խնդիրներ են ծագում անընդհատ կուտակվող նոր փաստերի ամփոփման, ժամանակին ուսանողներին և երիտասարդ մասնագետներին այդ ինֆորմացիայի հաղորդման և նրանց կողմից յուրացման համար: Ծառացած նոր խնդիրների լուծումը մեր երկրում պահանջում է հայերեն լեզվով մասնագիտական գրականության ստեղծում, ժամանակի պահանջներին համապատասխան դասագրքերի կազմում և ուսումնական ծրագրերի վերանայում: Այդ տեսակետից միանգամայն ողջունելի է կենսաքիմիայի բնագավառի հանրաճանաչ գիտնականներ Գաբրիել Խաչատրյանի և Միքայել Աղաջանովի «Կենսաքիմիա» դասագրքի հրատարակությունը: Այն կենսաքիմիայի և մոլեկուլային կենսաբանության զարգացման արդի փուլը ներկայացնող շատ հաջող կազմված, օրիգինալ ձեռնարկ է՝ բժշկական և կենսաբանական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների, բժիշկների և կենսաքիմիկոսների համար:

Հեղինակները իրենց առաջ խնդիր են դրել կենսաքիմիայի բուռն զարգացման արդի փուլում ամփոփել նրա հիմնարար սկզբունքները, որպեսզի ընթերցողը հնարավորություն ունենա լիովին յուրացնել նկարագրվող օրինաչափությունները և գնահատել մոլեկուլային կենսաբանության և կենսատեխնոլոգիայի նվաճումները՝ ընդունելով նշված ուղղությունների գերակայությունը բժշկագիտության զարգացման գործում:

Կենսաքիմիայի մեծածավալ այդ դասագրքում հստակորեն շարադրված են պարզ և բարդ սպիտակուցների, նուկլեինաթթուների, ֆերմենտների, ածխաջրերի, լիպիդների, վիտամինների և հորմոնների կառուցվածքային առանձնահատկությունները, դասակարգումը, ֆիզիկաքիմիական հատկությունները, որակական ու քանակական անալիզի հիմնական մեթոդները, կենսամոլեկուլների փոխանակության ուղիները, էներգիայի փոխակերպման պրոցեսները, կենսաթաղանթների կառուցվածքը և հիմնական ֆունկցիաները, ռեցեպտորների գործունեությունը, ինչպես նաև մոլեկուլային գենետիկայի հիմնահարցերը:

Առանձնակի ուշադրության են արժանի դասագրքի՝ սխեմաներով հարուստ վերջին՝ 9–14-րդ գլուխները, որոնք վերաբերվում են ածխաջրերի, լիպիդների, սպիտակուցների, նուկլեինաթթուների փոխանակության և օրգանիզմում էներգիայի փոխակերպման ուղիների հանգամանալից նկարագրությանը:

Չնայած մանրամասն շարադրանքին և բերված միանգամայն ժամանակակից բարդ կենսաքիմիական տվյալներին՝ նյութը ներկայացված է այնքան պարզ և հետաքրքիր, որ այն մատչելի է անգամ առարկային նոր ծանոթացողների համար: Միանգամայն տեղին են բերվող օրինակները ախտաբանության մոլեկուլային հիմքերի պարզաբանման և ախտածնության մեխանիզմների բացահայտման վերաբերյալ: Այդ տեսակետից ձեռնարկը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում բժշկական բուհերի ուսանողների, բժիշկների և տվյալ ոլորտի երիտասարդ գիտնականների համար: Այն զգալիորեն կհեշտացնի կենսաքիմիական պրոցեսների հիմնավոր ընկալումը և հիվանդությունների բուժման առավել արդյունավետ մեթոդների մշակման գործընթացը:

Գովելի է, որ ձեռնարկը կարող է օգտագործվել նաև որպես տեղեկագիրք, քանի որ գրքի վերջում հատուկ բաժնով բերված են կենսաքիմիական ու կլինիկական-լաբորատոր ախտորոշման մի շարք ցուցանիշների նորմատիվները:

Անհրաժեշտ եմ համարում ընդգծել պրոֆեսորներ Գ.Խաչատրյանի և Մ.Աղաջանովի մեծ ավանդը հայրենական բժշկակենսաբանական գիտությունների զարգացման գործում: Կենսաքիմիայի և մոլեկուլային կենսաբանության բնագավառում նրանց կողմից կատարված հիմնարար հետազոտություններն էլ հիմք հանդիսացան ձեռնարկելու տվյալ դասագրքը գրելու և հրատարակելու շնորհալի գործը: Նյութի շարադրման, թեմաների հաջորդականության և ձեռնարկի ձևավորման հիմքում դրված է կենսաքիմիայի դասավանդման գործընթացում նրանց մեծ փորձը, որն աստիճանաբար կատարելագործվելով՝ հաջողությամբ ամփոփվել է տվյալ դասագրքում:

Մեծ համոզմունքով կարելի է ընդգծել, որ հայրենական բժշկակենսաբանական գրականությունը հարստացավ ևս մեկ լավագույն հիմնարար ձեռնարկով, ինչպիսին է Գ.Խաչատրյանի և Մ.Աղաջանովի «Կենսաքիմիա» դասագիրքը, որը, ըստ էության, հայերեն լեզվով առաջին հիմնավոր ձեռնարկն է բուհերի ուսանողների, բժիշկների, կենսաքիմիայի և նրան հարակից ոլորտների երիտասարդ մասնագետների համար: Անկասկած այդ դասագիրքը շուտով մեծ ճանաչում և համբավ կունենա շահագրգիռ ընթերցողների շրջանում՝ դրանով իսկ նպաստելով կենսաքիմիական գիտելիքների խորացմանը և բարձրակարգ մասնագետների պատրաստմանը մեր երկրում:

Поступила 12.02.02

Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, ՀՀ Արդյունաբերության կենտրոնի գիտ. գծով փոխտնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դ.Ա.ՂԱԶԱՐՅԱՆ